ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Նվեր Բադալյանը, Աշոտ Հարությունյանը, Ռազմիկ Մարկոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Լուսինե Գրիգորյան, Ռուբեն Ոսկանյան, Արտաշ Արտաշյան, Մուրադ Օհանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել 27-ը հունվարի 2022թ. թիվ 1 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին,

3.2022 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

4.2022 թվականի համար «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

5.2022 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանելու մասին,

6.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

7.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի կառավարման ամենամյա ծրագիրը հաստատելու մասին,

բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,

9.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2018-2022 թ.թ. ինգամյա զարգացման ծրագրի՝ 2021 թվականի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին,

10.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին,

11.Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող ՄՏՋ 82-1 մակնիշի տրակտորը «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին,

12.Համայնքային նշանակության փողոցի անվանակոչման մասին,

13.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրային հայտեր ներկայացնելու մասին,

14.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող շինությունը, և շինության սպասարկող հողամասը աճուրդային կարգով տարելու մասին,

15.Եղեգիս համայնքի Շատին և Արտաբույնք բնակավայրերի միջնակարգ դպրոցներում ու Հորբատեղ բնակավայրի հիմնական դպրոցում իրականացվող ծրագրերին աջակցելու նպատակով գույք ձեռք բերելու և նշված դպրոցներին նվիրաբերելու համար համաձայնություն տալու մասին,

16.Եղեգիս համայնքում գողությունների կանխարգելման նպատակով տեսախցիկ ձեռքբերելու մասին,

17.Եղեգիս համայնքի ավագանու 29/06/2021թ. թիվ 65Ա և 13/08/2021թ. թիվ 78Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01 Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թ. տարեկան բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ա) եկամուտների գծով՝ 286574.2 հազ. դրամ
բ) ծախսերի գծով՝ 381374.9 հազ. դրամ.

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝համաձայն հատված 2-ի:
4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝համաձայն հատված 3-ի:
5.Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝համաձայն հատված 4-ի:
6.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝համաձայն հատված 6-ի:
8.«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
բ) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15 %-ը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02Ն/

Լսեցին

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել 2022 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03 Ա/

Լսեցին

ԹՎԱՔԱՆԱԿԸ,ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել 2022թ. համար «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04 Ա/

Լսեցին

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

2022 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանել 430 000 (չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 05Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման 1-13 հավելվածների:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 06Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի կառավարման ամենամյա ծրագիրը ստորև ներկայացված տվյալներով՝

1.Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օտարում՝

1.1.Գյուղատնտեսական նշանակության վարելահող՝ 45 հա, խոտհարք՝ 40հա, արոտ՝ 600հա, այլ հողեր՝ 500հա:

1.2.բնակավայրերի նշանակության հողեր՝ 1,5հա:

2.Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի տրամադրում՝

- Գյուղատնտեսական նշանակության վարելահող՝ 75 հա, խոտհարք՝ 95հա, արոտ՝ 1500հա, այլ հողեր՝ 800հա:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 07 Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել .Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 08Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 Թ.Թ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2018-2022թ.թ. հնգամյա զարգացման ծրագրի՝
2021 թվականի իրականացման հաշվետվությունը համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 09Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԱՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-րդ կետի և 82.1.-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10Ա/

Լսեցին

ՏՐԱԿՏՈՐԸ «ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, ավագանին որոշում է՝

1. Եղեգիս համայնքին սեփականության իրավունքով պատկանող ստորև ներկայացված տրակտորը երեք տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին՝

մակնիշը՝ ՄՏԶ 82-1, պետհամարանիշը՝ 1323 ԼՏ, թողարկումը՝ 2010թ., տեխնիկական վկայագիր՝ Բ N 015766:

2. «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել տրամադրված տրակտորի անխափան աշխատանքը և սարքինությունը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 3-րդ գլխի դրույթները

ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի դեպի Ցախաց քար եկեղեցական համալիր տանող փողոցը անվանակոչել՝ «Եղեգիս համայնք, Արտաբույնք բնակավայր, փողոց 23, փակուղի 1» անվամբ:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքի կողմից զարգացման ծրագրերին մասնակցելու վերաբերյալ ներկայացվող հետևյալ հայտերը՝

1.Ոռոգման խողովակաշարի կառուցում՝ Եղեգիս համայնքի Քարագլուխ,Սալլի, Հորս, Աղնջաձոր, Թառաթումբ, Հորբատեղ, Արտաբույնք,Շատին, Վարդահովիտ բնակավայրերում /տնտեսական զարգացման ծրագիր/,

2.Արտաքին էլեկտրալուսավորության իրականացում՝ Եղեգիս համայնքի Շատին, Աղնջաձոր, Թառաթումբ, Հորս, Հերմոն, Քարագլուխ բնակավայրերում /սոցիալական զարգացման ծրագիր/,

3.Խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում, ՕԿՋ-ի վերանորոգում՝ Գողթանիկ, Եղեգիս, Վարդահովիտ, Քարագլուխ, Շատին, Թառաթումբ բնակավայրերում /տնտեսական զարգացման ծրագիր/:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՌԱԹՈՒՄԲ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի տնօրենի 12/08/2021թ. թիվ 02-Տ/12.8.2021 գրությունը՝ անշարժ գույքի գնահատման մասին, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման անշարժ գույքը /մակերեսը՝ 94,5ք/մ/, և անշարժ գույքին սպասարկող հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 10-024-0007-0003, մակերեսը՝ 0.018հա, վկայական թիվ 1266721/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գինը սահմանել 136000 /մեկ հարյուր երեսունվեց հազար/ ՀՀ դրամ:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԵՎ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒ ՀՈՐԲԱՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ,21-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի Շատինի միջնակարգ դպրոցի տնօրենի 23.12.2021թ., և Հորբատեղի հիմական դպրոցի տնօրենի 04.01.2022թ. գրություններն ու Արտաբույնքի միջնակարգ դպրոցի տնօրենի 23.12.2021թ. դիմումը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի 2022թ. բյուջեում 01.1.1ոլորտի 5122 հոդվածով նախատեսված գումարից Եղեգիս համայնքի Շատին և Արտաբույնք բնակավայրերի միջնակարգ դպրոցի երեխաների համար «Տաքսնունդ»ծրագիրըպատշաճկերպովկազմակերպելուհամար 18 սեղան 72 աթոռևՀորբատեղիհիմնական դպրոցիմիջոցառումները, ինչպեսնաև «Ազգային երգ ու պար» առարկայի դասապրոցեսն արդյունավետ կազմակերպելու համար մեկ հատ նվագարկիչ ձեռքբերելուևնշվածդպրոցներիննվիրաբերելուհամար:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՍԱԽՑԻԿ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ,21-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի պետի 14.01.2022թ. թիվ 82-259 գրությունը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի 2022թ. բյուջեում նախատեսված գումարից Եղեգիս համայնքում գողությունների կանխարգելման նպատակով մեկ հատ տեսախցիկ ձեռքբերելու համար:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16Ա/
Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29/06/2021Թ. ԹԻՎ 65Ա ԵՎ 13/08/2021Թ. ԹԻՎ 78Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏԱՇ ԱՐՏԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Եղեգիս համայնքի ավագանու 29-ը հունիսի 2021թ. «Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայով, բարձիչ էքսկավատորով, «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով և Վոլտրա-90 ՏԳ մակնիշի բուլդոզերով մատուցվող ծառայությունների դիմաց սակագներ սահմանելու մասին» թիվ 65Ա որոշման հավելվածի՝

1.1. 4-րդ կետի 2-րդ պարբերության մեջ «13 000 /տասներեք հազար/» թիվը և բառերը փոխարինել «15 000 /տասնհինգ հազար/» թվով և բառերով:
1.2. 4-րդ կետի 2-րդ պարբերության մեջ «18 000 /տասնութ հազար/» թիվը և բառերը փոխարինել «20 000 /քսան հազար/» թվով և բառերով:
1.3. 4-րդ կետի 2-րդ պարբերության մեջ «1000 /մեկ հազար/» թիվը և բառերը փոխարինել «1500 /մեկ հազար հինգ հարյուր/» թվով և բառերով:
1.4. 4-րդ կետում կատարել հետևյալ լրացումը՝ «Ինքնագնաց տեղափոխման համար էքսկավատորավարին մեկ ժամվա աշխատանքի համար վճար սահմանել 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ»:
2.Եղեգիս համայնքի ավագանու 13-ը օգոստոսի 2021թ. «Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող Էլազ ԲԼ-880 բարձիչ էքսկավատորով, «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով, Վոլտրա -90 ՏԳ մակնիշի թրթուրավոր բուլդոզերով, «Գազել» մակնիշի միկրոավտոբուսով և «ՈՒազ» մակնիշի ավտոմեքենայով համայնքապետարանին մատուցվող ծառայությունների դիմաց սակագներ և վարորդի վարձատրության չափ սահմանելու մասին» թիվ 78Ա որոշման մեջ՝

2.1.Վերնագրում «Վոլտրա-90ՏԳ մակնիշի թրթուրավոր բուլդոզերով» բառերից հետո լրացնել ««Ջիմա 1304» մակնիշի անվավոր տրակտորով,» բառերը:
2.1.Բովանդակության 1-ին մասում «8 000» թիվը փոխարինել «10 000» թվով:
2.2.Բովանդակության 2-րդ մասում «8 000» թիվը փոխարինել «10 000» թվով:
2.3.Բովանդակությունը լրացնել նոր 6-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «6.Ջիմա 1304 մակնիշի աբվավոր տրակտորի կոմունալ հրիչով աշխատանքների մեկ աշխատանքային օրվա համար սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ»:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17Ա/

ՆՎԵՐ ԲԱԴԱԼՅԱՆ բացակա

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ բացակա

ԶՈՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐԹՈՒՐ ԱՏԵՓԱՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Աննա Դանիելյանը _____